ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 09.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/99

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.12.2017թ. թիվ 03/26-3/24639-17 գրությամբ «Հին Նորք-Մարաշ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) 28.12.2017թ. թիվ 01/61-28794 գրության հիման վրա, 29.12.2017թ. թիվ 03/26-3/24639-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Հին Նորք-Մարաշ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Հին Նորք-Մարաշ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 29.12.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/[1203541]-17 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «Հին Նորք-Մարաշ» ՍՊԸ-ին:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ Ընկերությունը ՍՑ-ԱՄ-2017/99 պաշտոնական ընթացակարգով տեղի ունեցած նիստի ժամանակ և 10.01.2018թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը. «Քանի որ Ընկերությունը ունեցել է կանխավճար, որի մեծ մասը եղել է արտոնագրային վճարի հաշվեհամարին և օրենսդրությամբ այդ հաշվեհամարից չի արտոնվում հաշվանցում կատարել՝ այդ իսկ պատճառով դիտվել է պարտավորություն, բայց փաստացի Ընկերությունը ունեցել է կանխավճար»:

«Հին Նորք-Մարաշ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 09.01.2018թ. ժամը 12:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ հայտնած դիրքորոշումը:

3. Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Երևանի քաղաքապետարանը 26.12.2017թ. թիվ 01/61-28794 գրությամբ հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից «ԵՔ-ԳՀԾՁԲ-17/39» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.12.2017թ. որոշմամբ առաջին տեղը զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Հին Նորք Մարաշ» ՍՊԸ-ն:

1. Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով, հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պատական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղն. զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ, համաձայն որի «Հին Նորք Մարաշ»

ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 43 161 ՀՀ դրամի չափով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 09.01.2018թ. ժամը 12:30-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2017/99 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2017/99 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-17/39» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով «Հին Նորք Մարաշ» ՍՊԸ-ն 06.12.2017թ. հայտ է ներկայացրել:

2. «Հին Նորք Մարաշ» ՍՊԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. «Հին Նորք Մարաշ» ՍՊԸ-ն ընթացակարգի 1-ին չափաբաժնին մասնակցելու նպատակով հայտի N 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 2 725 000 ՀՀ դրամ:

4. Պատվիրատուն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով (այսուհետ՝ Կարգ) սահմանված կարգով 11.12.2017թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղն. զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

5. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 13.12.2017թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Հին Նորք Մարաշ» ՍՊԸ-ն (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 43 161 ՀՀ դրամի չափով:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությունը, 14.12.2017թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացրած որոշումով Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով մերժել է «Հին Նորք Մարաշ» ՍՊԸ-ի հայտը:

5. <u>Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.12.2017թ. թիվ 03/26-3/24639-17 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 26.12.2017թ. թիվ 01/61-28794 գրությունը՝ կից փաստաթղթերով և «Հին Նորք-Մարաշ» ՍՊԸ-ի 10.01.2018թ. գրությունը հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, ***գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:***

Նույն մասի 6-րդ կետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը՝

1) գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ << գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված

որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Գնումների մասին ՀՀ օրենսդրության մեջ տարաբնույթ ընկալվող դրույթների վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարի 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանման համաձայն՝ եթե Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և մասնակիցը կամ Կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը պատվիրատուին չի ներկայացրել մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ապա անկախ նշված ժամկետից հետո մասնակցի կամ Կոմիտեի կողմից լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու հանգամանքից, պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազոր մարմին:

Ընդ որում այս դեպքում, նկատի ունենալով, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չունենալու վերաբերյալ, սակայն ***Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությամբ արձանագրվում է ժամկետանց պարտավորությունների առկայությունը, ուստի այդ հանգամանքը դիտարկվում է որպես մասնակցի կողմից***

գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, որի արդյունքում դադարեցվում է այդ մասնակցի հետագա մասնակցությունը գնման գործընթացին և մասնակիցը ներառվում է ցուցակում:

Այսպիսով, Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-17/39» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

«Հին Նորք Մարաշ» ՍՊԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

«Հին Նորք Մարաշ» ՍՊԸ-ն ընթացակարգի 1-ին չափաբաժնին մասնակցելու նպատակով հայտի N 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 2 725 000 ՀՀ դրամ:

Պատվիրատուն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված կարգով 11.12.2017թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղն. զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ, որին ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 13.12.2017թ. տրամադրվել է եզրակացություն համաձայն որի «Հին Նորք Մարաշ» ՍՊԸ-ն (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 43 161 ՀՀ դրամի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությունը, 14.12.2017թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացրած որոշումով Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով մերժել է «Հին Նորք Մարաշ» ՍՊԸ-ի հայտը:

Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերությունը ՍՑ-ԱՄ-2017/99 պաշտոնական ընթացակարգով տեղի ունեցած նիստի ժամանակ և 10.01.2018թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը. «Քանի որ Ընկերությունը ունեցել է կանխավճար, որի մեծ մասը եղել է արտոնագրային վճարի հաշվեհամարին և օրենսդրությամբ այդ հաշվեհամարից

չի արտոնվում հաշվանցում կատարել՝ այդ իսկ պատճառով Ընկերության մոտ դիտվել է պարտավորություն, բայց փաստացի Ընկերությունը ունեցել է կանխավճար»:

Այսպիսով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝***

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենսդրության մեջ տարաբնույթ ընկալվող դրույթների վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանումը՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության վերաբերյալ, Խորհուրդը գտնում է, որ «Հին Նորք Մարաշ» ՍՊԸ-ի կողմից հայտի N 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը՝ մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասով, հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ վերջինիս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը գերազանցում է ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

ՀՀ ֆինանսների նախարարության 29.12.2017թ. թիվ 03/26-3/24639-17 գրությամբ «Հին Նորք-Մարաշ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01567762) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել և «Հին Նորք-Մարաշ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ